

Գ Ի Տ Ս Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Հ Ի Ց

Գրողների տարօրինակութիւններից.—Ինչի՞ են սպիտակում մեր մազերը.
—Վարմիր տենդ յարուցանող մածակները.—Յիֆի շիճուկային բժշկութիւ-
նը.—Բժշկութիւնը մրջիւնների մէջ:

Գրողների տարօրինակութիւններից.—«Revue Universelle»
ֆրանսիական թերթերում առաջ են բերուած յայտնի գրողների
տարօրինակ սովորութիւնները, առանց որոնց նրանք անկարող
են գրել:

Հանճարն ու տաղանդը որոշ գրդիչի ազդեցութեան տակ
է արտայայտուում և գոչէ ամեն մեծ գործ կատարելու համար
նրանք կարիք են զգում այդպիսի գրդիչի:

Այդ գրդիչները շատ տարբեր են լինում:

Մի քանի հեղինակներ միայն որոշ հագուստով կարող էին
գրել. Բալզակը հոգեորականի հագուստով, Դիւմա-որդին ֆլանելի
շապիկով ու կարմիր վարտիկով, Կոպպէն կարմիր վերնազգեստ.
Միլտոնը իր «Կորուսած դրախտը» գրելիս զցում էր վրան հին
բրդէ քղամիտ, Բիւֆֆոն հագնում էր պաշտօնական զգեստ և
կողքին կապում էր սուրը:

Շատերը շարժմունքների մէջ էին ոգևորութիւն գտնում:
Վիկտոր Հիւգօն համարեա վազում էր սենեակում, յանկարծ
կանգնում էր իր բարձր սեղանի առաջ, ու գրում և լցրած
թերթերը շաղ տալիս յատակի վրայ: Նոյնը անում են և մի քա-
նի ժամանակակից հեղինակներ (Մենտես, Լամար): Ուրիշները
ինչպէս Րիչպէնը, Գոնկուրը և ուրիշները—մարմնամարզութիւն
են անում ոգևորուելու համար: Սրանք շարժուողներն են: Կան
և այնպիսիները, որոնց երևակայութիւնը վառուում է միմիայն
անշարժ դրութեան մէջ: Լէյքնիցը միայն պառկած էր յղանում
իր մաքերը, երաժիշտ Տոմաշ և Րօսսինին նոյնպէս պառկած,
անկողնու մէջ էին հնարում իրանց օպերաները: Մի քանիսնե-
րը սառցնում էին ռաները, որպէս ղի գլուխները տաքանան:
Շիլլերը և Գրիտրին ստեղծագործութեան միջոցին, իրանց ռանե-

ըը սառուցի վրայ էին դնում Շատօրիանը բոբիկ ոտերով քայլում էր սառը յատակի վրայ և այնպէս թելադրում Բուսօն և Բօսսիւն—նոյն նպատակով տաքացնում էին գլուխները։ Առաջինը բաց գլխով նստում էր արեւի տակ, իսկ երկրորդը տաք շորեր էր փաթաթում։

Ջանազան զգայարանների զրգուռման նոյնպէս ոգևորում է հեղինակներին։

Լօրդ Դերբին աշխատանքի միջոցին անդադար օդի միջի մոզերն էր ծծում, Բայրօնը, Թէօֆիլ Գօտիէն, Բօդլէրը որ և է որոշ հոտերով զրգուռում էին իրանց հոտոտելիքը։ Բալզակը, Միլանը մեծ քանակութեամբ մոմեր էին դնում առաջները (տեսողութեան զրգուռման)։ Զօլան ցերեկն էլ լապտեր է վառում։

Մի քանիսն էրին ոգևորում է լսողութեան զրգուռումը։ Սրանք որոնում են աղմկալից տեղեր, սիրում են բարձր ծիծաղ, խուլ ձայներ։ Վերլէն, Պօնչօն և առաջուայ դեկադէնտների մի խումբ իրանց լաւագոյն երկերը գրել են Պարիզի սրճարաններում։

Աւելորդ է այստեղ յիշել այնպիսի զրգուիչներ, ինչպէս են խմիչք, ծխախոտ, օպիում, որոնց գրդիչ ազդեցութիւնը ի հարկէ, ժամանակաւոր է, և վնասաբեր։

Ինչի՞նչ են սպիտակում մեռ մազերը.—Մազերի սպիտակելը ծերութեան, այսինքն կազմուածքի ծիրաման առաջին նշանն է։ Սակայն լինում են և վաղաժամ սպիտակման դէպքեր, երբ վախից կամ մի մեծ կսկծից յանկարծ մի օրուայ մէջ մազերը ճերմականում են։ Երբեմն էլ վաղաժամանակ սպիտակելը ժառանգական երեւոյթ է։

Պարիզի պրօֆեսօր Մեչնիկով, որը վերջին տարիներս մի շատ սրամիտ և հետաքրքրական թէօրիա է ստեղծել ծերութեան մասին, այժմ բացատրում է մեզ և ծերութեան այս առաջնութեան երևոյթը—մազերի սպիտակելը։

Մազը անկենդան բան չէ։ Նա էլ մեռնող է աճում, նա էլ աճում է իր արմատով, նա խրւում է մաշկի մէջ և ծլում, ծըծելով իր անհրաժեշտ հիւթերը։ Որչափ էլ բարակ լինի մազը, դարձեալ նա մի քանի շերտերից է կազմուած, ինչպէս բոյսերը, օրինակ հէնց սոխը։ Այսպիսի շերտեր երեք են՝ ներքին, միջին և արտաքին. այնպէս որ մազը կարելի է բաղկացած համարել երեք իրար մէջ հագցրած ցիլինդրներից։

Այս բոլոր շերտերը կազմուած են մանր բջիջներից, որոնք կրամիտինման իրար վրայ հագցրած են։ (Այս մանրամասնութիւններն ի հարկէ միայն խոշորացոյցի միջով կարելի է տեսնել)։

Դրսի շերտերի բլիշները իրանց մէջ պարունակում են մազերին գոյն տուող ներկը. այս ներկը լինում է սեւ, շագանակագոյն, շէկ և այլն:

Մազերը սպիտակելու համար պէտք է, որ այս ներկը կամ ինչպէս գիտնականներն են ասում՝ այս պիգմենտը մի կերպ ոչնչանայ: Մինչև հիմա չէին հասկանում թէ ինչպէս է չքանում այդ պիգմենտը և զանազան ենթադրութիւններ էին անում:

Պրոֆ. Մեչնիկովը մօտիկ հետազօտելով այս երևոյթը, գտել է հետեւեալը.

Որոշ հասակում մազերի արտաքին շերտի կենսունակութիւնը և դիմացկունութիւնը նուազում է, և այն ժամանակ ներքին շերտի բլիշները աւելի զօրեղանում են, մտնում են դրսի շերտերի մէջ ու կլանում այնտեղի պիգմենտը, ու ետ գնում-անհետանում, երևի, արևան մէջ: Մեչնիկովը սպիտակող մազերի դրսի շերտերում գտել է ահագին քանակութեամբ այս ներկակեր բլիշներէ, որոնք վրայ են տուել ամեն կողմից, ինչպէս ազոաւները վրայ են տալիս դիակի վրայ, և ներկահատիկներով բռնաւորուած յետ են դառնում:

Ամենքը գիտեն, որ մի մեծ կակծից երբեմն մի գիշերուայ մէջ մազերը սպիտակում են: Այս երևոյթը Մեչնիկովը բացատրում է նրանով, որ ներվային զրգոման ազդեցութեան ներքոյ այս ներկակեր բլիշները ահագին քանակութեամբ կլանում են ներկը:

Կարմիր օքնդ յարուցանող մոծակները.—«Մուրճի» անցեալ տարուայ № 6-ի մէջ մենք խօսել ենք հասարակ դողէրոցքի (մալարիա) մասին և բացատրել ենք ամօծակային կոչուած թէօրիան: Այժմ դուրս է գալիս որ դեղին օքնդը ևս յարուցանում է մի տեսակ մոծակի խայթոցից: Մոծակները խածում են ու ծծում հիւանդների արիւնը և յետոյ առողջներին խածելով վարակում նրանց. ինչպէս այդ անում է մալարիայի մոծակը: Այս գիտելքի հիման վրայ այժմ պահպանողական միջոցներ են ձեռք առնուած: Այս օտարասպիւն հիւանդութիւնը մեծ մասամբ մահացու է.—հիւանդացոյններից 75⁰/₀ մեռնում է: Նա շատ տարածուած է Անտիլեան 'կղզիներում և Ամերիկայի արևմտեան ծովեզրում:

Տիֆի օքնուկային բժշկութիւնը.—Շիճուկով բժշկելու մեթօդը, որը ծնուել է Ֆրանսիայում, Ֆրանսիայումն էլ զարգացել, արդէն միանգամայն զարմանալի արդիւնքներ է տուել մի քանի սուր վարակիչ հիւանդութիւնների մէջ: Ամենքը գի-

տեն, թէ ինչ հրաշքներ է գործում գիֆտերի տի շիճուկը: «Մուր-
ճի» վերջի համարում մենք խօսեցինք և օձի խայթոցի դէմ գը-
տած շիճուկի մասին: Այժմ մի քանի խօսք ասենք տիֆի բժըշ-
շկութեան մասին:

Տիֆի շիճուկը գտել է ֆրանսիացի Շահամէսը: Նա այս
իճուկով բժշկել է շատ հիւանդներ:

Նրա ստատիստիկային նայելով, 100 հիւանդից 94-ը ա-
ռողջանում են, այն ինչ միւս բուժական միջոցներով բժշկուե-
լիս միայն 75-ը, նոյն իսկ 70-ը:

Բժեկութիւնը մեղիւններ է մեջ: Իբրև կուրեօզ առաջ բերենք
«Որ. ք. Միսիոն»-ի մէջ տպուած մի լուր: Մի անգլիացի գիտնական
պատմում է հետեւեալը. մրջնատնից դուրս եկան մի քանի նիւ-
հար մրջիւններ, որոնք հազիւ ոտի վրայ էին կանգնում, և դի-
մեցին մօտակայ բլրակը, որի վրայ բազմած էր մի մեծ ու չաղ
մրջիւն: Մի քանի առողջ մրջիւններ օգնում էին հիւանդներին
բարձրանալ այդ բլրակը: Հաստ մրջիւնը, որը երեւի բժիշկն էր,
հերթով ընդունում էր հիւանդներին: Բժշկութիւնը կայանում
էր նրանում, որ բժիշկը իր թաթիկները շարժում էր հիւանդի
վրայ, և դրանով, երեւի, ճիշդութեամբ էր: Հասկ էինք, որ մրջիւննե-
րի մէջ կայ թագուհի, լաւ կազմակերպուած զօրք, բանուոր-
ներ, ճարտարապետներ, բայց բժշկի մասին չէինք լսել:

Վ. Ա.